Արձանագրություն N 2
Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2025-65» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան «16» հոկտեմբերի 2025 թ.
ժամը 14:50-ին

Նախագահ՝ Կ. Չթչյան
Անդամներ՝ Մ. Երիցյան
Ա. Ոսկանյան
Քարտուղար՝ Զ. Թովմասյան
Բացակայում է.

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2025-65» ծածկագրով գնման ընթացակարգին՝ 2025 թվականի հոկտեմբերի 10-ին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը
1.	«Գոռ Գյոկչյան Գրիգորի» ԱՁ	Մոլդովական Փ./Շ./25/1/34 Նոր Նորք հեռ. +374 96 28 88 28, e-mail: gorgyokchyan@yahoo.com ՀՎՀՀ 26635703
2.	«Պրոֆսերվիս1» ՍՊԸ	Կոտայք, Աբովյան 4/16/7, հեռ. +374 93 66 67 18, e-mail: info@profservice.am ՀՎՀՀ 03545751

2. Տվյալներ ծրարը կազմելու, ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին և բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2025-65» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.

«ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2025-65» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ՝

- **«Պրոֆսերվիս1» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում՝ «Հավելված N 1»-ում (Դիմում հայտարարություն գնանշման հարցման մասնակցելու) ընկերուցյան հարկ վճարողի հաշվառման

համարն սխալ է նշված, ինչպես նաև իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը նշված չէ:

- Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը ինչպես նաև հրավերի առաջին մասի 8.8 կետը՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է՝ և մասնակցին տրվել է 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել շտկված Հավելված N 1-ը:

«Պրոֆսերվիս1» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է շտկված «Հավելված N1»-ը:

- **«Գոռ Գյոկչյան Գրիգորի» ԱՁ**-ի կողմից ներկայացված հայտում՝ Հավելված N 1»-ում (Դիմում հայտարարություն գնանշման հարցման մասնակցելու) նշված չէ, որ երկրի ռեզիդենտ է հանդիսանում:

«Հավելված N 2»-ում (Գնային առաջարկում) նշված չէ առաջարկվող աշխատանքի անվանումը, ինչպես նաև գնային առաջարկը՝ «Ընդհանուր գինը /տառերով և թվերով/» սյունակ լրացված է միայն թվերով:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը ինչպես նաև հրավերի առաջին մասի 5.2-րդ կետը՝ մասնակցի հայտը մերժվում է:

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ /ՀՀ դրամ/.

Ընթացակարգի հրավերով սահմանված կարգին բավարարող մասնակիցների գնային առաջարկները.

չ/հ	Աշխատանքի անվանումը	չ/մ	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)	Քանակ	«Գոռ Գյոկչյան Գրիգորի» ԱՁ		«Պրոֆսերվիս1» ՍՊԸ	
					Մասնակցի գնային առաջարկը առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)	Մասնակցի գնային առաջարկը ԱԱՀ-ն ներառյալ (ՀՀ դրամ)	Մասնակցի գնային առաջարկը առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)	Մասնակցի գնայի առաջարկը ԱԱՀ-ներառյալ (ՀՀ դրամ)
1	Սառնարան-սենյակների հավաքման, տեղադրման և շահագործման հանձնելու աշխատանքներ	դրամ	800,000	1	768 000	768 000	800 000	800 000

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել:

5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն գնահատող հանձնաժողովը

Որոշեց.

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը ինչպես նաև

հրավերի առաջին մասի 5.2-րդ կետը, առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ **«Գոռ Գյոկչյան Գրիգորի» ԱՁ_ի** հայտը մերժել:

2. «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2025-65» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցին **«Պրոֆսերվիս1» ՍՊԸ-ին՝ 800 000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:**
3. «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2025-65» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ է սահմանվում համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝
Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Ստորագրություններ.
Գնահատող հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Կ. Չթչյան
Անդամներ՝
_____ Մ. Երիցյան
_____ Ա. Ոսկանյան
Քարտուղար՝ _____ Հ. Թովմասյան